


ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոյ. 30 անդ

ԿԼԵՆԻԿ



ՊԵՏՄԵՆԻ

Գրութիւնք եւ
շնն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ · ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

— Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

Ե ՏԱՐԻ

— ԱՊՐԻԼ. 21 ՇԱԲԱԹ 1901 —

ԹԻԻ 209

ԱԶԳԱՅԻՆ

Միքայել էֆ. Յակոբեան ըստ իւր բարի սովորութեան աշտ տարի ալ Զատիկին 10 ծրար (754 եարտա) շաշաֆ նուիրած է Հիւանդանոցի մէջ պատասխարեալ որբոց հագուստի համար:

— Աղգային Հիւանդանոցի Որբանոց—Արհեստանոցին մէջ կահադործութեան յատուկ ճիւղ մ'ալ աւելցած է:

— Պոլսոյ թերթերէն կը տեղեկանանք թէ Տիգրիսի մամ. դեր— հիւպատոս Յովհաննէս էֆ. Նաֆիլեան՝ Բէօթէնէի դեր— հիւպատոս անուանուած է:

— Խառն ժողովը նկատողութեան առնելով Պուլկարիոյ և Ռուսանիոյ մէջ զստ զատ առաջնորդութիւններ հատուտելու խնդիրը, որոշեց պաշտօն տալ Երէցեան Տ. Գէորգ Սրբազանի եւ նորատունկեան Գաբրիէլ էֆէնտիի որ այդ առաջնորդութիւններն հաստատելու միջոց ու եղանակը ուսումնասիրեն ու ծրագիր մը պատրաստելով ներկայացնեն Վարչութեան:

— Ամերիկայի առաջնորդ Գեր. Յովսէփ Եպ. Սարաճեանի առաջարկութեամբ Մաղկազարդի օրը Նիւ Եօրքի Ս. Յովհաննէս Աղղ. Եկեղեցւոյ մէջ ի նպաստ նոյն եկեղեցւոյ հանգանակութիւն մը կատարուեր է, որուն արդիւնքն եղած է 601 տոլար (3005) ֆր. Տիար Յ. Ս. Թաւադեան սոյն հանգանակութեան մէջ նշանակելի գումար:

րով մը մասնակցելէ զատ, 500 ֆր. ի արժողութեամբ Մկրտումեան տաղան մը նուիրած է եկեղեցիին:

— Պոստնաբնակ Պ. Մոխէս Կիւլէզեան կարեւոր հնարքով մը մեծ պատիւ բերած է Հայ անուան: Ամէն ոք գիտէ թէ երբ գետինը սառած է, ելեքտրական կառքերու անիւներ փոխանակ գէպ յառաջ ոլորելու կը հոլովին նոյն կէտին վըրայ, և այսու կառքի ընթացքը կը կասի: Ասոր պատճառն է անիւներու և գետնի միջև շփման բացակայութիւն, և այս թերութիւնը զարմանելու համար կառավարն աւազ կը թափէ անիւներուն առջև: Մինչեւ հիմա աւազն կառավարին քովը դրուած էր դոյ ի մը մէջ, որմէ նա կը գործածէր ի հարկին: Պ. Կիւլէզեանի հնարքով այս գծաւարութեան վերջ կը տրուի: Հայ հնարագէտը տալի մը սարքած է ելեքտրական կապակցութեամբ, որու ասեղին վրայ երբ կառավարը կոխէ, առկիւռ առաջ և ետ պիտի շարժի և հարկ եղած աւազը արտի թափէ ճիշդ անիւներուն առջև: Ամերիկեան թերթեր մեծ գովեստիւք կը խօսին այս հնարքին վրայ: Փորձով տեսնուած է թէ շատ գոհացուցիչ դեր մը կը կատարէ:

Չայն Հայրենեաց

— Նիւ Եօրքի հայ տիկիները յաջողած են երեք տարուան մէջ 2212 տոլար հանգանակել ի նպաստ որբերու, սոյն գումարին 641 տոլարը իւր պահեստի գումար նեղ օրերու համար պահելէ վերջը կրցած են մնացած գումարով 20 որբ աղջիկ պահել եւ դաստիարակել Վանայ Սայնապատ որբանոցին մէջ:

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

Առկայծ, փրփր մոմիս առջեւ

Անշրջուկ,

Կը տրայտիս ես, հեւ ի հեւ,

Միւսկոնկ:

Մարած եմ աշխատեմքն ամբողջ

Իմ սրտին:

Աստղերուն պէս, որոնք, դողդոջ,

Կ'անհետին:

Մոռացի տրած է բոլորական

Հոգոյս մէջ:

Որ, աշտմ, դաճեւ է տրամանակ

Մէկ քրտէջ:

Ոհ, հրեւի է որ դրամ ես,

Հոս, որաւի,

Միւս դուն, աղոթո՛ւ, հեռացեւ ես

Բիւր փառաւիս:

Սիւրբ-Գրէ, 4 Հոկտ. 1900

ԾԱԹՈՐ

ՀԱԿԱՐՁԱԳԱՆՔ

Հաւր թուաւ . . . թշուաւ աջոր,

Միւսկոնկ:

Մոնդի փրփր, մարդ առ կայծ

Պապոն

Թիթեռնիկը՝ փառեց անխայծ

Եւս հեռուն:

Աստղ մը չեւ դուն, աշ շիջման մօտ

Ձեռք կանթեղ

Աստղ մըն ես, հեզ, քափառկոտ

Խեղալեղ:

Ձոր սեզ հորին տաք ու կրակ

Պաշտուն

Չ'արժանացուց, փախաւ արագ

Միշտ հեռուն:

Եւ չոր գոյիս դուն մնացիր

Միւսկոնկ

Ձոր պոռացիր, գործ մոռացիր

Կոկոկոնկ:

Ծոթոր ըլլայ թէ ազատեղ

Խաւրին շոտ

Երբ չը փայլեն ցօղ սրտազեղ

Պոտ առ պոտ:

ԱՅԼԱՏԳԵՂ

ՏԵՄԵՐԻՔ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ.)

Բարիկ

Պաշտօնական շրջանակաց (իմա՝ գարեջրատանց) մէջ զրոյց մը կը շրջի թէ առաջնակարգ երկու հայ յեղ. կուսակցութիւնը մօտ օրէն պիտի միանան . . . երազնուն մէջ:

Նոյն

Կրտսի թէ Զօպանեան աղօթքի կեցած՝ Արդունեանի վերադարձին կը սպասէ անհամբեր, վերավերակազմեալ Հնչակեանութիւնը յալտարարելու համար:

Պուէնոս այրէս

Անճարակին ամուսնացող հարսի մը սնտուկէն իր նախկին սիրահարներէն ընդունած նամակներու խոշոր պարոքան գտնուեցաւ:

Հարաւ՝ որ 150 ոսկի գրամօժիտ բերած էր, «Աստիք բանաստեղծական գրութիւններ, քու խելքէդ վեր բաներ, նոյն ըսելով կեսրոյն բերանը գոցեց:

Քամիաթքա

Եկեղեցիին նուիրուած երբ զանգակը որ զէր-տալիի ծառն կ'ախառնէ, հրաման ստացաւ միմիայն յուր օրերը ձայն հանել, իսկ գմբէթին վրայի հին քաղաքի զանգակը կիրակի և տօն օրերը պիտի ձայնէ:

Թատրոն Սանդրալ

Հակառակ թերթերու միջոցաւ հրատարակուած «ըստ խնդրանաց բաղմոթիւ ազգայնոց»-ի ընդամենը 20 վճարող և 45 ազգային հանդիսական եկած ըլլալուն պատճառաւ՝ Վաղարշականի հերոսներու տաճկերէն ներկայացումը տեղի չունեցաւ:

Նոյն

Մարդ մը որ գաւաթը 10 բարայի շուրջի խմելու համար հետը քնսիլով շուրջ բերած էր, թախմիկովը ետ տարաւ:

Պուկարիոյ յեղափոխութեան 25 ամեայ յորելեանին առթիւ հրապարակ ելած նամակագրոյնները կը ծախուին Պուկարական բուլբուլ մասնագետ Տ. Ա. Զարպհանէլեանի քով ի վառնա:

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԷՐ

ՊԱՏԱՆԻ ՄԸ ՈՐ ԻՒՐ ՄԱՅՐԸ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ

Բարիչ 22 Ապրիլ 1901

Բարիչի բազմաշատ փողոցներէն մէկուն մէջ երէկ մարդասպանութիւն մը տեղի ունեցաւ հետեւի պարագաներու մէջ.

Առկէ 15 տարի առաջ կար կարող կին մը իր երիտասարդ հասակին մէջ կը կորսնցնէ իւր էրիկը շուտափոյթ մահով մը: Այրի կինը Էրեք տարեկան երեխայով մը միամիտակ կը մնայ Բարիչի մէջ, որ իր միակ միսթարանքն ու յոյսն էր. երկար տարիներ այրի կը մնայ և բնաւ չի մտածեր նոր ամուսնութեան մը վրայ, այլ հոգւով մարմնով ինքզինքը իր գործին նուիրելով կը մեծցնէ իր երեխան:

Դրացիներէն մին՝ փորագրիչ գործաւոր մը, քանի մը տարի շարունակ յիշեալ կնոջ ետեւէն կիչնայ, անոր հետ ամուսնանալու համար. խեղճ կինը բաւական դիմագրելէ յետոյ խօսք կուտայ գործաւորին առաջարկը ընդունելու, ասոր վրայ բանը այնպէս կը դառնայ որ կար կարող կինը գործաւորին սիրուհին կըլլայ փոխանակ օրինաւոր կինը ըլլալու: Բաւական ժամանակ միասին կապրին. բայց գործաւորը կամաց կամաց գործէ կը պաղի, ատեն մը կուգալ որ նա այլևս չէր աշխատէր, այլ իւր սիրուհոյն երեսէն կապրէր: Հրէշային գործաւորը ոչ միայն իր սիրուհոյն աշխատանքովը կ'ապրէր, այլ և շատ անգամ կը ծեծէր զայն: Ամեն իրիկուն, սրճարաններու ու դինետուններու մէջ կը մնար մինչև կէս գիշեր. կ'ատէր նաև իւր սիրուհոյն օրինաւոր զաւակը, ըոռնով թէ իրենը չէր ու զայն ալ կը ծեծէր ոչ ինչ պատճառներով:

Վերջապէս անցեալ տարի գործաւորը սաստիկ կը ծեծէ իր խեղճ սիրուհին, այն աստիճան որ ոստիկանութիւնը կը միջամտէ և վայրենի գործաւորը 8 ամսուան բանտարկութեան կը դատապարտուի: Կնոջ օրինաւոր զաւակը՝ անխիղճ մարդուն մեկնելը տեսնելով կըսէ իւր մօրը որ այլ ևս ոչին մարդուն երեսը չի նայի, ապա թէ ոչ ինքը պիտի ոտիպուի տունէն հեռանալ: Մայրը գորովալից աչքերով կը խոստանայ իր հարազատին որ բնաւ երբէք յարաբերութիւն չպիտի ունենայ գործաւորին հետ, և մայր ու տղայդ կը սկսին աշխատիլ իրենց օրապահիկին հալթայթմանը:

Առկէ քանի մը շաբաթ առաջ գործաւորը բաւական կ'ըլլէ. ազատուելէն ի վեր կ'ուզէ եղբր իւր նախկին սիրուհին տեսնել և նորէն անոր

հետ բնակիլ. իր ծանօթները խորհուրդ կուտան որ ետ կենայ ա՛յդ գաղափարէն, բայց նա ընդհակառակը օր ըստ օրէ աւելի կը փափաքի իւր սիրուհոյն, քանի մը անգամ անոր կը հանդպի անոր փողոցին մէջ, բայց կինը կը մերժէ անոր բոլոր առաջարկները:

Երէկ կիրակի, կէս օրէն յետոյ ժամը մէկին մայր և տղայ իրենց տունէն դուրս կելլին պըտըտելու համար. յանկարծ փողոցի մը անկիւնը իրենց դիմացը կ'ըլլէ գործաւորը որ իրենց դըժբաղդութեանցը պատճառ եղած էր. սա կ'սկսի նորէն առաջարկներ ընել կնոջը. երբ այս վերջինը կը մերժէ, զրպանէն դանակ մը հանելով թեթեւ կերպով կը վիրաւորէ իւր նախկին խաբած սիրուհին: Զաւակը տեսնելով իւր մօր արիւնը, կայծակի արագութեամբ կը յարձակի գործաւորին վրայ, զէնքը ձեռքէն կը խլէ և մօտ հինգ հարիւր հետաքրքիրներու ներկայութեան, նոյն դանակով չորս հարուածներ տալով հոն կը սպաննէ գործաւորը...: Ներկաներէն շատերը ծափահարեցին և գովեցին պատանեոյն ցոյց տըւած ծնողասիրութիւնը: Ս. Դ.

ԷՏՈՒՐՏ Է. ՔԱՂԱՌՈՐԻՆ ԱՆՄԱՆՈՂՆՆԷ

Բարիչի մօտ Պուլօնի անտառին որճարաններէն մէկուն մէջ զատկական տօներուն առթիւ զուարճալի դէպք մը պատահեցաւ: Լոնտոնեան շաբաթաթերթի մը խմբագրապետը, որ զարմանալի կերպով կը նմանի Անգլիոյ թագաւորին ոտքը ոտքի վրայ դրած սիկար կը ծխէր, երբ յանկարծ անսովոր ոգեւորութիւն մը և տարօրինակ հետաքրքրութիւն մը տեսաւ իր բոլորտիքը: Մերուհի Փրանսասի մը ոտք ձլաւ ու գոչեց, « Կեցցէ՛ Անգլիոյ թագաւորը », և բոլոր ներկայք ցնծութեամբ կրկնեցին նոյն աղաղակը: Ասոր վրայ սրճարանին նազախոսութիւն պատն ալ, յարգանքի պակասութեան մէջ չգտնուելու համար անմիջապէս զարկաւ Անգլիոյ ազգային երգը. « Աստուած պահէ թագաւորը », Բայց այլապիւր բաւական էր խմբագրապետին համար, որ փոթաց դէպ ի դուռը նետուիլ ու կծիկը դնել:

Ճաշակներ. — Սանտուիչ կղզիներու երիտասարդը կը փափագի որ իր հարսնացու օրիորդը մարմնով ծանր կշռէ: Զինացիին կ'ուզէ որ պղտիկ ոտք ունենայ եւ սև ներկուած ակռաներ: Ափրիկէի վայրենի ցեղապետն ալ կը սիրէ որ իր կնոջ առջեւ ակռաները սղոցի բերնի պէս խարտոցուած ըլլան: Մեր մէջ ալ կ'ուզուի որ

հարսնացուն փառալը ըլլայ: (Ճաշակի խնդիրներ):

Նամակադրոշմ. — Ամբողջ աշխարհի վրայ զանազան ազգութեանց հին նամակագրոշմներ ժողովողներուն թիւը մօտերս հինգ միլիոնի հասած է, որուն մէկ միլիոն հինգ հարիւր հազարը կիներ եւ օրիորդներ կը կազմեն:

Պատահաբան. — Պատահաբանները ամենէն առաջ մուտ դտան փրանսայի մէջ կարողութիւն ժամանակ: Նախ փայտէ ու փղոսկորէ կը շինուէին: Առաջինները հազիւ ժ. ժ. Գարեբուն մէջ գործածական դարձան:



ՍԻՐՏԸ ԵՐԱՅ ԱՏԱՄԱՋՈՒՐԿ ՄԸ

(Շար. եւ վերջ)

Ձերկարեմ, հետեւեալ օրը ցորեկին ելայ շուկան ճաշարան գացի, կարելի եղածին չափ առանձին անկին մը քաշուեցայ: Բայց հակառակ պիտի ըլլայ եւ, քիչ մը վերջը գտնուած սեղանին շուրջը երկու հոգի եկան դիմաց տեղաւորուեցան: Ի՞նչ ըսելու իրաւունք ունէի:

Իմ դիտաւորութիւնս եւ փափաքս էր, — քանի որ ալ ես ահալայ ունէի, քանի որ ափով ոսկի համրած էի, քանի որ այնքան ապահովութիւն առած էի թէ՛ բնականէն անհունապէս գերազանց մարգարտաշար աղօրքի մը տիրացած էի, վերջապէս քանի որ շաբաթներէ ի վեր մսի կարօտեցի հալած ու մաշած էի, այո՛, այս ամէն պատճառներով միտքս գրի կուշտ ու կուռ ճաշ մ'ընել: Այս, հէմէն զըխըմ ուտէի:

Ուստի նախ եւ առաջ մսի ջուր մը ապսպրեցի եւ դիտամբ հացի կարծր կեղեւներով «կսայ փորձ մը ընել: Հակառակ լինտերու ահռելի ցաւին, հակառակ սեղանակիցներու խորհրդաւոր եւ չարաճճի ականարկներուն, արիւն քրտինք թափեցի եւ շարունակեցի ուտել՝ պարզսպէս վարժուելու համար:

Մալուեան կամ սալափուռեան՝ խալաֆաթի

համար ցամաք քաշող պօծուղատի պարաններուն ձայնը լսած էք, կամ ուրիշ կերպով հասկցնեմ. նոր բոթին հագած էք ա՛, անշուշտ դիտած էք որ առջի քանի մը օրերը «կը՛ւթ կը՛ւթ, խը՛ւթ, խը՛ւթ, կը՛ւծ, կը՛ւծ», տեսակ մը ձայնով կը սկսի վարժուիլ: Արդ իմ բերանիս մէջ գտնուած պլանդակ զանգուածն ալ ճիշտ միեւնոյն անճոռնի նուագարանի պաշտօնը կը կատարէր, եւ այդ իսկ էր որ գրաւած էր սեղանակիցներու ուշադրութիւնը:

Մսի ջուրը այս կերպով լմնցնելէ յետոյ, քիչ մը օրման ֆէպայի տպապրեցի, յանձնարարելով որ կարելի եղածին չափ կակուղներէն զատէ: Եկան օրման քէպապին, ո՛վ խորհրդաւոր վայրկեան, ո՛վ ճակատագիր, արդեօք ի՞նչ վերապահած ես ինձի:

Կը սկսիմ կոր, «Պահապան ամենայնի, դուն գիտես», Շատ փափկութեամբ, շատ գուրգուրանքով բերանս կը տանիմ եւ կը սկսիմ մեծաւ զգուշութեամբ կէս մը ծամելով կուլ տալ: Երկրորդ պատահն ալ այսպէս, բայց միշտ հացին թաթախն ալ չմոռնալու պայմանաւ, ինչպէս նաեւ խուկեր ու մոմեր ուխտանալով: Երրորդ պատահին կ'զգամ որ լեզուս կը խայթուի, սուր դանակէ մը ճեղքուելու պէս բան մը կըլլայ: Տէր Աստուած, դուն ողորմէ: Մէկ երկու շաբաթում ես, եւ ահա, ո՛վ աղետալի վայրկեան, վերնայարկի առաստաղը, չա՛րթ, ու երկու կտոր եղած՝ վար կը գահավիժի:

Սեղանակիցներու լկրտածութեամբ արձակած քահքահ, իմ կացութիւնս, դէմքիս ու ձայնիս այլանդակութիւնը, կարսօններուն իրարանցումը, կոտորած ականները ժողուել ու գրպանըս դնելու յուսահատ շարժումներս կատարեալ կ'ընեն այս կէս ողբերգական եւ կէս զաւեշտական տեսարանին առաջին արարուածը: Լեզու եւ գրիչ չէ կարող նկարագրել իմ անցուցած ահռելի ճգնաժամս, ուստի՝ ձեռքերս բերանս, լուսնով ճաշարանէն դուրս նետուեցայ:

Այս, հէմէն Աստուծոյ կրակին կաս, ո՛վ Տիշ-ճի . . . , գաւաթ մը ջուրին, պատառ մը չոր հացին, կէս ոիկառացու թիւթիւնին ախլը կարօտը քաշես, ո՛վ խառա լահանա, ո՛վ վայրի կարնապիտ, ո՛վ ծնունդ դեհենի, ո՛վ պատկեր դիւային, ո՛վ պարծանք Սողոմոյ եւ Գոմորայ, ո՛վ անօրէն աւերիչ մարգարտաշար ատամանցս, ո՛վ, ո՛վ . . . : Այս, Աստուծոյ սիրուն, շնորհքով ածական մըն ալ դո՛ւք գտէք սագարչիլի արարածին, որ սիրաս պաղչկի:

Մահուան դողերու մատնուած և քրտինք-
ներու մէջ լողալով ինքզինքս դուրս նետեցի և
շունչս առի նախանձ-Տիշնիին սենեակը: Թէ որ
Աստուծոյ չվախնայի, հաւատացէ՛ք որ նոյն վայր-
կենին ակոռը գլխուն իջեցնելով շանատակ պի-
տի հանէի, բայց . . . խոհեմութիւն:

Հանեցի գրպանէս խորտակուած հոտորը և
իրեն ցոյց տալով՝ կերպով մը ըսել ուզեցի, —
Հաւնեցա՛ր ըրածիդ —, Բայց զի լցցի բանն որ
ասացաւ թէ «Ասորը նէտէ՛ն առլանըր», չուլ տա
կիսէ: «ալլանըր», ինք փոխանակ քիչ մը կար-
մբելու, փոխանակ դառն վիճակիս վրայ արգա-
հատանք մը զգալու, ամենայն լիւտածութեամբ
սկսաւ սա լեզուով յանդիմանութիւն մ'ընել ինծի:

— Ամմա՛ մարդու չաթմիշ ըրինք հա՛, Պէ՛
մարդ Աստուծոյ, դուն հիշ չէ՛ն ինք չե՛ս մի տե-
սեր, պարէ առաջ կերակուր ծածկ սովորէիր տէ՛
անկէց ետքը թախըմ շինել տայիր, Բո՛ւհ, մե՛ղք
հազար մե՛ղք քաշած քահմէթիս (սանքի պապա-
իդ հոյուն՝ պէտիհէվա շինեցիր), Շունա պաք պէ
սիրտս անոր համար կէրի քի, ինծի պէս վարպէ-
տին (վա՛յ գլխուդ մէջը ըլլայ) շինած չէ՛իկի
պէս ակոռներուն՝ 24 սաթովան մէջ է՛նէլը մտեր
լըմնցուցեր ես, աղէկ ա՛, հիմա ի՛նչ երես սուռա-
թով ելեր է՛կեր ես ինծի:

Խոտովանեցէ՛ք որ, իմ տեղս եթէ Անտոն
Անապատականն ալ եղած ըլլար, համբուրութիւ-
նը սպառելով աս սոյթարիին գանկը իրաւ կը
ջախճախէր. սակայն ի՛նչ ընէի որ «Պաշա կէ-
լէն չէք ի՛ր»:

Ձերկարեմ՝, գործը անուշի բռնելով:

— Գուզում վարպետ, ըսի, եանկընա էլիազէ
իլէ կիթմէզլէր. իմ սրտիս կրակը ինծի հերիք
է, խաթ մըն ալ դուն պարէ ալէֆ մի՛ տար տէ
սըվոր ճարը նայէ, ես քու զահմէթդ պարապը
չեմ հաներ:

— Հասկցանք ամա, ասիկա փակցունելու
համար խաղան վառելու է: Տիշնիներուն խաղա-
նը չամաշըրին խաղանը չըլմանիր, է՛ն քիչը
ուսկէն պակաս չըլլար: Հէմ էկու նայէ քի, ակս-
սի պիտի ըլլայ ես, այս շաբթու հիշ խաղանի
գործ չունիմ:

Ալ սկսայ միտքովս ըսել. — Հա՛յ խաղանդ
ալ գըլուխդ փառատի պողատագ ալ գլուխդ
անցնի, թէքնէդ ալ, էփոցդ ալ, թէքնէլիքդ ալ
դուն ալ . . . քեզի տիշնի տէյի օսթան ձգողն
ալ: Բայց իմ գործս անէ՛ծք կարգալով չէր լմըն-
նար. ուստի հանեցի մէկ ոսկի տուր որպէս զի
ելնէ խաղա՛ն է, թէնճիթէ՛ է ի՛նչ է նէ վառելով
գործս տեսնէ: Գիտէ՛ք ա՛, փարային երեսը տաք
կըլլայ, կըսեն: Ոսկին առածին պէս աներևոյթ
եղաւ. ես կը յուսայի թէ խաղանը վառելու գա-
ցած է. երբ, քանի մը վայրկեան ետքը վար ի-
նչաւ, ձեռքը մինի մինի օրիորդի մը ձեռքերուն

արժանի կարի սիրուն կողով մը բռնած, որուն
մէջէն սկսաւ կարգաւ հանել՝ ասեղ ու ճախարակ,
մկրատ ու մատնոց: Ի սկզբան այնպէս կարծե-
ցի թէ բանթօլնին պատուաւ կարկտանը կա-
րելու համար էր: Որչա՛փ սխալ: Կրնա՛ք երեւա-
կայել թէ ի՛նչ բանի պիտի գործածէր ատոնք:
Կեցիք ես պատմեմ: Հաստըկէ՛լ սե դերձան՝ մը
տոնդին անցունելէ յետոյ, ոտքի ելաւ, կոտրած
ակոռայի հատորներուն եղերքները մեքենայով
ծակծկեց և ապա սկսաւ դէմ առ դէմ խախտ
թէյնի ընել. ինչ որ հինգ վայրկեանէն լմնցաւ:
Փորձեցի և տեսայ որ, իրաւ, առժամապէս գոր-
ծածելու համար ոչինչէն աղէկ էր, սակայն, կոտ-
րած ըլլալու հետեւանք քիչ մը թուլցած էր, և
իրարու վրայ երկու խօսք ըրածիս պէս՝ իսկոյն բեր
նէս դուրս կընետուէր: Ուստի գիտողութիւն ըրի:

— Ատոր ալ ճարը կայ, ըսաւ նաքո՛ւքողոնու
տորեան ամբարտաւանութեամբ, ու երկու սիկա-
րի թուղթ առնելով՝ քառչուն խոռոչներուն
մէջ տեղաւորեց: Այս առժամանակէն զարմա-
նին՝ այսինքն թել մը դերձանի ու սիկառի եր-
կու թուղթին համար կիւզէլիմ ոսկի մը ցնծացի:
Միայն թէ, ինքը իբրեւ պարկեշտ մարդ, (վրաս
գրէ), հասաւտ խոստում տուաւ որ խաղան վա-
ռած օրը ինծի լուր տալով: Կոտրած ակոռնե-
րըս անիշրելի և անխոցելի, անառիկ և անդի-
մադրելի, անխախտելի և անբռնաբարելի եղա-
նակաւ իմն շինէ ու շտկէ:

Ախ, այս գործողութիւնը, հաւատացէ՛ք, մէկ
ամսուան մէջ 2-3 անգամ կրկնուեցաւ, աւելորդ
է ըսել միշտ միեւնոյն չօլբազութեամբ. եւ դար-
ձեալ՝ ոչ կերած հացն հաց էր, ոչ ձայնս ձայն,
և ոչ ալ խօսքս խօսք: Ի մի բան կենդանի նա-
հատակ մէկ դարձած, չգիտեմ որ չգործած մե-
ղացս համար: Յուսահատութիւն, կիրք, շուաքում,
ծախսած ստակներուս փոխարէն կրած տառա-
պանքներս, ամենուն ծաղրին ու հեգնութեան,
մանաւանդ տան խոհարարին «մեր աֆանտուն
քնթին մէջ եաբու մի կայ, իսկէլէ՛ մի խուրմիշ
արիւր ին, կըլթալաղընտա քէմիւք մի զալմըշ»
ըսելները հալեցուցած ու մաշեցուցած էին զիս,
երբ . . . Աստուած պիտի ընէ ես, առտու մը քա-
նի մը բարեկամներ զիս գիմաւորելով կըսեն.

— Իմացա՛ր, քուկին զաւալը Տիշնիդ չիկայ,
սէր սէֆիլ եաթալի եօրղանով պառկեր է:

— Ինչո՛ւ, ի՛նչ եղաւ որ, հարցուցի՝ կա-
րեկցութիւն կեղծելով:

— Քառսունը ութը սաաթ է մէկ ծանի կը
պոռայ չէնեհէի ցաւէն, պապի խնդութեան պէս
բան մը կուգայ վրան, ըրածը թողածը չգիտէր
ու ինքզինքը փողոց կը նետէ եղեր:

— Հէմէն Տէրը ինք ողորմի տէ, ըսի, ըրած
քառիֆները գիմացը բերէ:

ԳԻՄՄԷՆ

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (16)

ՌԻՆԷ ՏՐԻՐՈՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՊԱՐԺԱՐ-ՄԱՐԺԱՆԵ)



Այն ատեն տիկին Լութեր վաղեց բռնեց անոր ձեռքն և տարաւ մինչև երկար աթոռ մը ուր երկուքն ալ նստան , և նաւապետը ըսաւ անոր .

—Քաջացէք , տիկին , պատրաստ եմ փորձելու ձեզի տուած խոստումս :

Տիկին Լիու իր խօսակցին վրայ յառեց արցունքէ կարմրեցած աչքերը : Տխրաբեկ նայուածքը հարցունքներուն ամենէն պերճախօսն էր :

—Իմ յատակագիծս շատ պարզ է , շարաշարեց նաւաղը , և երէկ , ձեռնէ բաժնուելէս յետոյ առած տեղեկութիւններս կը յուսադրեն զիս թէ պիտի յաջողիմ , քոնկ իշխանը վաղը կը գառնայ Քանդոն , և ձեր աղջիկը դատապարտող վճիռը անմիջապէս իրեն պիտի ներկայացուի : Արդ՝ ես այս գործին վրայ յիշատակագիր մը խմբագրած եմ զոր զուր անձամբ պիտի ներկայացնէք Ն. Բարձրապատուութեան :

—Ե՛ս , ի՛նչպէս . չէ՞ք գիտեր ուրեմն թէ անկաւրելի է փոխարքային մօտենալ :

—Նախատեսեցի այդ գիտարութիւնը , և ահա որոշումս : Իր ժամանման երկրորդ օրը , իշխանը Հօնանի մեհնարը պիտի երթայ : Մեզ , օտարականներուս երբեք չարգիլուի իր ճամբուն վրայ կենալ՝ զինքը ողջունելու համար : Մեր մէջադը պիտի կենաք զուր , և անցնելու պահուն իրեն պիտի տաք ձեր աղերսագիրը : Մեր ներկայութեանը պատճառաւ պիտի փութայ առնել զայն :

—Կը կարծէ՞ք :

—Մի՛ տարակուսիք : Ինչորքէ փոխարքան շահագրգռելու և զինք համոզելուն վրայ է թէ Մէնկ մեծապէս սխալած է : Կարծեմ՝ յաջողած եմ : Ասիկա թարգմանել տուէք Միի մեհնարին այն կրօնաւորին որ ձեր աղջիկը պաշտպանեց , և վաղը չէ միւս առաւու հոս ինծի եկէք :

Այս խօսքերն ըսելով՝ հրամատարը տիկին Լիուի յանձնած էր տասերկու էջէ բաղկացեալ ձեռագիր մը , զոր կինը առած էր փութով և որուն իմաստը կը ջանար հասկնալ , թէ և իրեն անձանթ լեզուով մը գրուած ըլլար :

Այս տեղեկագրին մէջ , հարցաքննիչ դատաւորի

ձգտարիտ տեղեկագիր , մարտախոյսը նախ կապացուցանէր թէ Սոլ—Պրոտէի անցեալը ամեն կասկած կը վանէր , և թէ իր ամուսինին ոչ սպաննիչն էր , և ոչ սպանչին մեղսակիցը , վասն զի Ի—Թէն չէր Լէնկ—Թաւ Լանկը զարնողը :

Յետոյ կը պատմէր թէ Մէնկ նախագահը , առանց բնութիւն ընելու , բանտարկած և անգթօրէն չարչարած էր ամբաստանեալ աղջիկը զոր կրնար իր ընտանեաց պահպանութեանը տակ ձգել :

Քանի մը վայրկեան ետքը , տիկին Լիու , յուսալից , Չինական քաղաքը կ'ուղղուէր , բայց յանկարծ ետ նետուեցաւ սոսկումի աղաղակ մը զսպելով :

Իր գահաւորակիրները կեցած ըլլալու էին բազմաթիւ ամբոխի մը առջև որ ճամբան կը գոցէր և եռանդեամբ կը ծափահարէր ոստիկան մը : Այս մարդ բարձրաձայն կը պողաւոր , կարմիր թուղթէ թերթեր բաժնելով ժողովրդեան :

«Աւասիկ Տիար Լէնկի սպաննիչներուն մահուան դատավճիռը : Իր կինը , անուանեալն Սոլ—Պրոտէ , պիտի կախուի . Ի—Թէն կրօնաւորը յամր մահուան պատիժը պիտի կրէ : Իրենց պատիժը , սեր կայսեր կողմէ տրուելիք հրամանէն յետոյ , տեղի պիտի ունենայ մէկ ամիսէն , արեւածագին , սովորական հրապարակին վրայ նահանգային բանտին առջև :

Տասը վայրկեան ետքը , տարաբախտ կինը , որուն ականջներուն մէջ միշտ կը հնչեն լսած սոսկալի խօսքերը , ջլածօրէն բազուկներուն մէջ կը սեղմէր իր աղջիկը :

Կը թուէր իրեն թէ այդ մէկ ամիս պայմանաժամը մէկ օր միայն ունէր և թէ ամեն վայրկեան պիտի գային Սոլ—Պրոտէն առնէին ձեռքէն կախաղան հանելու համար :



ԺԱ.

Մոպսինեմ և Մախախոյս

Քոնկ իշխանը , փոխարքայ հարաւորեւելիսն երբեք նահանգներուն և հօրեղբորորդի կայսեր , այն ժամանակը դեռ երիտասարդ մարդ մըն էր և շատ խելացի :

Եւրոպիոյ գործերուն շատ գիտակ , շնորհիւ ճիգ ուղիներուն որոց տնօրէնութեան տակ աւարտած էր իր կրթութիւնն ի Բեքին , չէր հաւնէր մեկուսացման աւանդական քաղաքականութեան զոր եռանդեամբ ի գործ

կը դնէր Ձինու կառավարութիւնը: Ընդհակառակը սիրալիր ընդունելութիւն կընէր օտարականներուն:

Եթէ թշնամին յետոյ էր միտնարներուն և ափիոնի մաքսախոյսերուն, ասիկա բոլորովին մասնաւոր նկատումներու արդիւնք էր:

Արոնքի մասին յոյժ սկեպտիկ, ինչպէս նաև բարձր դասու բոլոր Ձինացիները, պիտի թողուր կաթսիկ կըզերը որ իրենց կրօնքն ըստ հաճոյս քարոզեն, եթէ անոնք շատ անգամ անպատեհ վարմունքներ չունենային և իր փոխարքայութեան ժողովուրդները պիտի կրնային գիշեր ցորեկ գինովալ առանց իր կողմէ ունէ արգելքի, համոզուած ըլլալով թէ արգելքն է որ փափագը կը սրէ, եթէ այս ներածման մէջ տեսած չըլլար ճշմարիտ միակ պատճառը դրամական տագնապին որով երկար տեսնէ ի վեր կը տառապէր Ձինաստան:

Արդարև, ափիոնի ներածումէն առաջ, Ձին կը յորդէր ոսկի և արծաթ դրամով, վասն զի Եւրոպա բան մը չունենալով անոր տալու, իր նաւերը պարապ կերթային հոն, և յաճախակի թէյ և ուրիշ բերքեր տանելու համար անկից, օտարներն ստիպուած էին ահագին գումարներ ձգել, որք բնականաբար երկրին մէջ կը մնային, ուր ձոյլի կը փոխէին դանոնք:

Նախ Ուէսլէսլէյ մարքիզը, — այն տան ընդհանուր կառավարիչ Հնդկաստանի, — ենթարկուած էր այս վտանգին, և անոր առաջին առնելու համար էր որ հընարեց ափիոնի այս առուտուրը, միմիայն նպատակ ունենալով Երկնային Այսրութեանէն դուրս հանել մեծագոյն մասն արծաթին զոր Եւրոպա և Ամերիկա կը ձգէին հոն:

Ինչպէս կը տեսնուի, ոչ բարոյականի ոչ հանրային առողջապահութեան խնդիր կար, այլ պարզապէս ելմտական հաւասարակշռութիւն մը:

Քոնկ իշխանը, իր կողմէ խնդիրը տարբեր տեսակէտով չէր ըմբռներ, բայց որովհետեւ մաքսախոյսներն հալածելու համար աւելի ծովահէններուն վրայ վստահութիւն ունէր քան մաքսային նաւերուն, այս պատճառաւ գետեզրն ու գետաբերանը աւրջակոյ աւազակներուն համար ճշմարիտ անպատժութիւն մը առաջ եկած էր՝ երբ կը յարձակէին եւրոպացի նաւերու վրայ:

Այս կերպով փոխարքան իր նպատակին կը հասնէր, առանց վնասելու իր յարաբերութիւններուն օտար պետութեանց հետ:

Բայց Բերքինս նաւապետը գուշակած էր այս մեղսակցութիւնը: Մէնկ, որ երկար տան մանտարէնի պաշտօն վարած էր ի Պօքթա—Թիկրիս, իր բարեկամական սրտազեղումներուն մէջ զրեթէ խոստովանած էր այս բա-

նը, եւ նաւապետը ապացոյցով ալ համոզուած էր, եղբրական դէպքի մը առթիւ որ տեղի ունեցած էր Լէնկ Թալանկի սպանումէն քիչ առաջ:

Ափիոնի երկու մաքսախոյս նաւեր, Նախաս և Աթիլ, յարձակում կրած, կողոպտուած եւ չրասոյց եղած էին ծովասպատակներու կողմէ, Մաքթօնէն քանի մը մղոն վարօք, եւ այդ նաւահանգիստը խարսխող Ձինական մարտանաւերը բնաւ փորձ չէին ըրած օգնութեան հասնելու:

Այս երկու նաւերուն նաւապետներ խողխողուած էին, եւ իբրեւ գոհացում, իշխանը մահուան դատապարտել տուած էր քանի մը թշուառահաններ որք գետաբերինն մօտ ձերբակալուած էին:

Անոնք քիչ տեսնէն պիտի կախուէին ի Հոնկ—Քոնկ:

Անգլիական գաղթականութեան կառավարիչը ի գուր ազաջարկած էր անցնիլ արշաւախումբի մը գլուխը ընդդէմ Լատրոն կղզիներուն, որք կեդրոնն էին այդ սոսկալի ասպատակներուն, բայց Քանդոնի իշխանութիւնը ազդուապէս ընդգիծացած էր եւ որովհետեւ չէին համարձակեր այս օրինալանց մարդոց պատճառաւ պատերազմի մը առիթ տալ, ոճիրները կը կրկնուէին յաճախ:

Այն տան, մաքսախոյսները որոշած էին ինքզինքնին իրենք պաշտպանել կամ զօրութեամբ, կամ ստակով այսինքն կամ մարտնչելով ծովահէններուն դէմ կամ կաշառելով դանոնք, ինչպէս կը կաշառէին Պօքթա Թիկրիսի մանտարէնները եւ ընդհանուրին շահուն համար, կատարեալ իշխանութիւն տուած էին Բերքինսի, որուն ամենէն կորովի և ամենէն ճարպիկ ըլլալը գիտէին:

(Շարունակելի)

Հրատարակուեցաւ «Այինէի Լէթայիֆ» Եօթերորդ տետրակն ալ 20 տետրին բաժնեկիւնէ և Պուլկարիոյ համար 2 ֆր. արտասահման շուկէս ֆր. կանխիկ:

Բարեյիշատակ եղիազար Մուրատեանի հելինակած «Բնական Պատմութիւն Արշակ Բ. և անոր Պապ որդւոյն» անուն երկասիրութիւնը այս անգամ լոյս տեսած է Աեքսանդրիոյ «Արաքս» նորահաստատ տպարանէն և կը ծախուի ի գին 2¹/₂ ֆրանք: Պուլկարիոյ և Ռումանիոյ մէջ ստանալ փափագողք գիմելու ևն մեր խմբագրութեան:

Печатница „Взаимность“ — Варна